



### Արթուր Մովսիսյան. Ունենք լավ գիտնականներ, չունենք գիտելիքահեն տնտեսություն

«Երբ ինձ հարցնում են, գիտությունն ի՞նչ է տալիս երկրին, ես կարճ պատասխանում եմ՝ բարձր որակավորմամբ կադրեր, որն էլ իր արտացոլումն է գտնում բոլոր ոլորտներում», - [Panorama.am](http://Panorama.am)-ի հետ զրույցում ասում է Գիտության կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մովսիսյանը: Նա պնդում է, եթե գիտական հետազոտություն իրականացնող գիտնականն է դասախոսում, ապա նրա ուսանողը ցանկացած աշխատանքում կլինի մրցունակ կադր, արժեք կստեղծի՝ ազդելով տարբեր ոլորտների վրա:

Հայաստանում գիտության տնական թերսֆինանսավորումը, այն որպես առաջնահերթություն չդիտարկելը բերել է մի իրավիճակի, երբ գիտության համակարգում մնալը գրավիչ չէ երիտասարդների համար, դրա հետևանքով խախտվել է տարիքային բաշխումը՝ համակարգում ներառված մասնագետների մեծ մասը կամ մինչև 30 տարեկան են կամ էլ 65 տարեկանից բարձր: Գիտության դերը կարևորողներն ահագանգում են, տարեց գիտնականների թիվն էլ նրանց մահվան պատճառով նվազում է, մի քանի տարի անց երիտասարդներին գիտելիք փոխանցողներ չեն լինի: Հաջորդ խնդիրը գիտական վատ միջավայրն է՝ շենքային պայմանները, գիտական սարքավորումների բացակայություն կամ հնամաշ լինելը:

Հիմա գիտության հատկացումների շարունակական ու էական ավելացման մասին պահանջի շուրջ համախմբվել են հիմնականում SS ոլորտի մի քանի հարյուր ընկերություններ՝ ստեղծելով «Գիտուժ» նախաձեռնությունը: Դրա շնորհիվ պահանջն ավելի լսելի է դարձել, քան նախկինում, երբ այդ գործը թողնված էր միայն գիտաշխատողների ուսերին:

Գիտության կոմիտեի փոխնախագահ Մովսիսյանը գիտության խնդիրները թվարկելուն զուգահեռ ունիկալ երևույթ է մատնացույց անում:

«Ինչքան էլ ֆինանսավորումը քիչ է, մեր գիտնականները, էնտուզիազմի հաշվին, միջազգային համագործակցությունների և դրաշնորհների շնորհիվ բավականին մրցունակ գիտական արդյունք են տալիս: [Global Innovation Index](http://Global Innovation Index)-ում գիտական արդյունքի նորմավորված ցուցանիշով Հայաստանը ամբողջ աշխարհում 18-րդ տեղում է, ֆինանսավորման ցուցանիշով՝

91-րդ տեղում է, ընդհանուր ցուցանիշով՝ 61-րդ տեղում է: Սա խոսում է այն մասին, որ մենք ունենք գիտնականներ, որոնք արդյունավետ աշխատում են, ու բավարար ֆինանսավորման դեպքում համակարգը վերակենդանանալու, զարգանալու տեղ ունի, այսինքն վիճակն անհույս չէ», - նշում է նա:

«Գիտուժ» նախաձեռնության՝ գիտության հատկացումների ավելացման անհրաժեշտության բարձրաձայնումից հետո կառավարությունը 2.7 մլրդ դրամ հատկացրեց գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար: Չափից ու ոչ համակարգային լուծումից դժգոհ նախաձեռնության անդամները հայտարարեցին՝ իրենց գործադիրի քայլը չի բավարարում:

ԳԿ նախագահի տեղակալն էլ փաստում է՝ այդ գումարով կտրուկ զարգացումների, գիտությունը փրկելու հույսեր փայփայել պետք չէ, սակայն այն կարելի է արդյունավետ ծախսել ու դրական արդյունքներ ունենալ: Արդեն մտածել են՝ մոտ 1 մլրդ դրամը կծախսվի ենթակառուցվածքների համալրման համար, մրցույթների միջոցով ձեռք կբերվեն սարքեր, սարքավորումներ գիտական կազմակերպությունների համար, դրամաշնորհային ծրագրեր կիրականացվեն արդյունավետ հետազոտությունների աջակցման համար, մինչև 50 դրամաշնորհ նախատեսում են տրամադրել առավել բարձր արդյունավետություն ունեցող գիտաշխատողներին, որոնք կձևավորեն 6-7 հոգանոց գիտական խմբեր, դրանց կազմում անպայման պետք է ներառված լինեն միջազգային գործընկեր, առնվազն երկու երիտասարդ գիտաշխատողներ, ևս երկու մագիստրատուրայի ուսանող ներգրավելու պայմանով ու տարեց գիտնականներ:

«Մա դառնում է համեմատաբար մեծ տարիքի գիտնականների դրամաշնորհ, որը միտված է գիտական կարգեր պատրաստելուն: Մենք հայտարարում ենք դրամաշնորհ գիտության բոլոր ճյուղերի համար, բայց կարևոր է նշել, որ այն լինելու է արդյունավետ աշխատող գիտաշխատողների համար, գիտաչափության պարամետրերը լինելու են խիստ ու միջազգային չափանիշներին համապատասխան: Մրցույթը կհայտարարվի այս շաբաթվա ընթացքում», - ասում է Մովսիսյանը:

Հատկացման շրջանակում կլինի նաև մեկնարկային դրամաշնորհ, որը միտված է մինչև 40 տարեկան երիտասարդների համար, որոնք կարող են խումբ ձևավորել ու լաբորատորիաներ ստեղծել: Կոմիտեի նախագահի տեղակալը ասում է՝ ակնկալում են, որ երկու մրցույթներն էլ հավակնոտ են լինելու, դրանցում ներգրավված է լինելու ավելի քան 400 գիտաշխատող, որից առնվազն 120-ը երիտասարդ: Կլինեն նաև երկակի հետազոտությունների աջակցման ծրագրեր, որպեսզի անվտանգությունից բխող խնդիրները ֆինանսավորում ստանան: Նախատեսված է նաև կիրառական արդյունքին միտված՝ տնտեսության կարիքներից բխող գիտական հետազոտությունների իրականացման մրցույթ, որտեղ համաֆինանսավորման նախապայման կա մասնավոր սեկտորի կողմից: Այս բոլոր դրամաշնորհների դեպքում հստակ ֆիքսված է, թե ինչպիսի արդյունք է ակնկալվում:

2.7 մլրդ դրամի հատկացումից գատ արդեն երկրորդ տարին է՝ գիտության կոմիտեն փոխել է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագրի պայմանները: Մասնավորապես, նախկինում մեկ տարվա փոխարեն նրանք հնարավորություն կունենան երեք տարվա ծրագիր ներկայացնել և լիարժեք ներգրավված լինել գիտության մեջ, գիտական ղեկավարը ևս կարող է ընդգրկված լինել մրցույթում, սահմանվել են հստակ ակնկալվող արդյունքներ, յուրաքանչյուր տարվա ավարտին: Կոմիտեում այս, ինպես նաև մեկնակի, ամրապնդման և առաջատար հետազոտությունների ծրագրերը համարում են համակարգաստեղծ ծրագրեր:

«Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր-2021» մրցույթին մասնակցելու հայտ ներկայացվում է առցանց ռեժիմով՝ Գիտության կոմիտեի մրցույթների հայտերի և հաշվետվությունների ընդունման համակարգով (<https://grants.scs.am>), մինչև 2021 թ. հուլիսի 16-ը ներառյալ (հայտի ուղարկման հնարավորությունը կարգելափակվի Երևանի ժամանակով ժամը 18:00-ին): Պահանջվող փաստաթղթերի առձեռն ներկայացման վերջնաժամկետը 2021 թ. հուլիսի 23-ն է:

«Այստեղ գումար չենք խնայելու, քանի ասպիրանտ համապատասխանեց սահմանված չափանիշներին, այդքանին էլ ֆինանսավորելու ենք: Մենք փորձում ենք ասպիրանտուրա ընդունվելու պահից մինչև խոր ծերություն՝ գիտաշխատողի գործունեության ողջ ցիկլը փակենք, որպեսզի նա համեմատաբար ապահովված լինի դրամաշնորհային ծրագրերով: Շատ կարևոր է, որ այդ գիտական կարիերայի ընթացքը չընդհատվի, որպեսզի գիտաշխատողները չհեռանան համակարգից», -նշում է կոմիտեի փոխնախագահը:

Արթուր Մովսիսյանը հիշեցնում է, որ գիտաշխատողների աշխատանքի հիմնական արդյունքը պետք է լինի գիտական հոդվածը, իսկ տնտեսության ապագա ճարտարապետությունը շատ երկրներում որոշում են գիտությունն ու բարձրագույն կրթությունը:

«Հայաստանը գիտական արդյունքի տեսակետից որոշ բնագավառներում դեռ ուժեղ է, բայց տնտեսության մեջ ներդրման ցուցանիշով առայժմ թույլ է: Դրա պատճառն այն չէ, որ մենք լավ գիտնականներ չունենք, այլ այն, որ ձևավորված գիտելիքահեն տնտեսություն չունենք: Երբ մեր տնտեսությունը կզարգանա այնքան (այստեղ կարևոր է երբ, ոչ թե եթե), որ մասնավոր ընկերությունները խնդիրներ կդնեն գիտնականի առաջ կամ գիտական դպրոց անցածները կստեղծեն փոքր և մեծ գիտելիքահեն ընկերություններ, այ այդ ժամանակ կարող ենք ասել, որ ունենք գիտելիքահեն տնտեսություն», -մանրամասնում է կոմիտեի նախագահի տեղակալը: